

# ՏԱԶԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
ՋԱՐՄԱՅՐ ՔԱՂԱՆԱՅ ԿԵՂԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 40

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍՏԿԱՆ ԽՆԴԻՐԸ. — Առաջիկայ ընտրու-  
թեան առիթ (Ե.)

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ. — Փորձեցէք Ձեր անձերը  
ԲԱՆԱԹԻՐԱԿԱՆ. — «Ղարաբաղ»ի նշանակութիւնը  
ՍԱՄՈՒՆԻ ՏՍՈՒՊՈՒՄԻՔԸ. — Դիտողութիւն մը  
Իրիկուան դէմ (քերթուած)

ՔԱՂԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ. — Արձագանգ Ամերիկայէն  
ՅՈՒՂԻՈՍ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՈՍ. — Առաջին Բրիտանացի-  
ներու ժամանակուան պատմութիւն (Շար.)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻՍ

ԽԱՉԻԿ Յ. ՅԱՐԱՃԵԱՆ

ՄԿՐՏԻՉ ՔԶՆՅ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԴՊՐԵՎԱՆՔՅԻ

ՆԻԿ. Թ. ԽԱՇՄԱՆԵԱՆ

ԼԷՈՆ ԹՈՂՍԹՈՅ

«ՏԱԶԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է  
դիմել առ Զարմայր Քաղանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեշիկթաշ, Հայոց Եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده «داجار» غزتمسى مديرى پاپاس زارماير افندى  
Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»  
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.



# “ՏԱՃԱՐ”Ի

## ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

|                            |            |
|----------------------------|------------|
| Պոլսոյ եւ Դաւառաց՝ տարեկան | 40 դրու    |
| Արտասահմանի համար          | » 10 ֆրանկ |
| Ռուսիա                     | » 4 ռուբլի |
| Ամերիկա                    | » 2 օթար   |
| Չեռեկ կը ծախուի պահկը      | 40 փարա    |

Հինգ ըստանորդ դանոզը իրաւունք ունի մէկ թերթ ձգիստանալու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒՆԵՐ ԿԱՆԻՔԻ ԵՆ  
ԾԱՆՈԹՈՒՄՆԵՐ ԿՐԹԻՔԻՆԻՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ:

### ԳՈՐԾԱԿԱԼՈՒՅԻՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-  
նորդ Տ. Արզէն Բէնյ. Դերձակեան  
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բէնյ. Դա-  
րիկեան  
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-  
ղոս Վրդ. Դաֆթանեան  
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեղին Բէնյ. Պողար-  
եան  
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍՍԱՐ. — Տ. Մաշտոս  
Ա. Բէնյ. Տօնէլեան  
ԲՄԲԵՐԴ. — Մ. Սանտեան էֆ.  
ԳԱՂԱՏԻՍ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.  
Կիւլէսէրեան  
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բէնյ. Սար-  
գիսեան  
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.  
Դիմաքեան  
ԵՐԶՆԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ  
Բէնյ. Սրամեան  
ԶՄԻՒՆԻՍ. — Տ. Յարութիւն Բէնյ. Տ.  
Սարգսեան  
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ քնյ. Տ.  
Գալուստեան  
ԿԱՐԻՆ. — Առաջն. Փոխանորդ Տ. Ներսէս  
Ա. քնյ. Վահանեան  
ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապիճն քնյ. Ալլաեան

ՀԱԼԷՊ. — Տ. Մկրտիչ Բէնյ. Մուրատեան  
ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բէնյ. Վարժա-  
պետեան  
ՄԱՐԶՈՒՆ. — Յակոբ էֆ. Սրապեան  
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ռուբէն Բէնյ. Պիպիեան  
Շ. ԳԱՐԱՀԻՍՍԱՐ. — Տ. Նաթան Բէնյ.  
Տառեան  
ՌԷՇԱՔ. — Յարութիւն քնյ. Աստարակեան  
ՊՐՈԴԱՍ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-  
դան Մ. Վ. Դաքայրեան  
ՊԱՆՏՐՈՍ. ՊԱԼԵՔՍԻՐ. — Տ. Կուսմի Բէ.  
Ֆիրդաթեան  
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.  
Եպիսկ. Կէօմքիւքճեան  
ՌՈՒՍՏՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բէնյ. Մըրջ-  
նիկեան  
ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ Տ. Դէորդ Մ.  
Վրդ. Ասլանեան  
ՍԵՐԱՍՏԻՍ. — Առաջն. Փոխանորդ Տ.  
Թէօփիլէ Բէնյ. Օտապաչեան.  
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-  
պետ Բէնյ. Թախմանեան  
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բէնյ. Տրէզ-  
եան  
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-  
եան  
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառժա-  
պետ Բէնյ. Քիպարեան  
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.  
ՖՐԷԶՆՈ. — Յակոբ էֆ. Նշկեան





## ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 40

### ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(ԱՍԻԱՏԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ)

Ե. (')

Կաթողիկոսին քաղաքական-ազգային իրաւունքներուն վրայ արդէն բաւական խօսեցանք : Կը մնայ կաթողիկոսին զուտ հոգեւոր իրաւունքները :

Ասիկա մէկ է. — Եկեղեցական նուիրապետութիւն եւ մատակարարութիւն :

Կաթողիկոսին՝ հոյնկոյոս օժելու եւ միւռոն օրհնելու երկու զուտ եկեղեցական առանձնաշնորհները — ժամանակին ընթացքովը նուիրագործուած՝ այնքան հեռատեսութեամբ — իրեն կուսան նուիրապետական կարգերու մէջ յատուկ իրաւակարգ մը, եւ եկեղեցական սարազի տակ ազգային միութեան նշանակելի գերութիւն :

Իբր եկեղեցական գերագոյն հեղինակութիւն, իր գերը ունենալով համաշխարհային հանդամանք, կաթողիկոսը կը պատկանի իւր Թրքահայուն եւ Պարսկահայուն, եւ ինքը միութեան կապ : Կը կազմէ եկեղեցական նուիրապետութեան մէջ :

(1) Շար. 39րդ Թիւէն :

Իբր հոգեւոր Պետ բարեկարգութեան կարօտ հնօրեայ եւ պատկառելի եկեղեցւոյ մը, Հայոց կաթողիկոսը փափաքելի է որ օժտուած ըլլայ լայնամտութեամբ, եւ կուսակից բարեկարգութեան, Հայ եկեղեցւոյն տալու համար վերանորոգիչ ոգի :

Հայ եկեղեցւոյ սկզբունքները շատ որոշ են : Կղեր եւ ժողովուրդ երբէք եւ ոչ մէկ չըջանի մէջ իրարու հակառակորդ եւ իրարմէ անջատ դասակարգեր չեն կազմած : Ժողովուրդն իսկ եւ իսկ է Հայ եկեղեցին, եւ կաթողիկոսն մինչեւ սուրհակա՝ այդ ժողովուրդին պաշտօնեան են եւ ասոր վճիռն կախում ունին :

Ռուսիոյ մէջ գծախտաբար այս կարգը խանդարուած է, Պաշտօնեայի արամադրութեան համաձայն՝ քահանաներու եւ կաթողիկոսներու ընտրութիւնը միայն ժողովուրդին կամքին ձգուելով, իսկ առաջնորդներու անուանումը կաթողիկոսին մանաւորս արուելով : Նուիրապետութեան առաջին աստիճանին վրայ դանուող քահանան իբր ծխականներէն կ'ընտրուի, եւ բարձրագոյն աստիճանին վրայ դանուող կաթողիկոսը՝ համօրէն ազգէն, տրամաբանութեան հակառակ է որ թեմակալ առաջնորդները եւ յաջորդները (փոխ-առաջնորդները) չընտրուին իրենց հօտէն :



Պաշտօնէիս զանոնք ընտրելու իրաւունքը կաթողիկոսին կուտայ, սահմանադրական սկզբունքն ու կաղմակերպեալ Հայ Եկեղեցւոյն տալով միապետական դրոշմ : Եւ դժբախտաբար այս սխալը ա՛յնքան արմատացած եւ ոռոսահայ կղերին յետագիւնական միառումներուն նպաստաւոր եկած է, որ չարաչար շահագործուած է :

Խրիմեան եւ Իզմիրեան, երկուքն ալ սահմանադրական ժողովրդական սկզբունք սիրահար եկեղեցականներ, փորձեցին ժողովրդեան իրաւունքը իրեն վերադարձնել, եւ թեմականերու կարծիքը առնելէ յետոյ կառավարութեան ներկայացնել ի հաստատութիւն :

Հակառակ անոր որ ոռոս կառավարութեան համար որեւէ նշանակութիւն չունէր, թեմականերու ընտրութիւնը, որ կրնար անգիտանալ եւ Պաշտօնէիս հիմնական պայմանը կաթողիկոսին կողմէ ներկայացնալ ըլլալը բաւական համարել, սկսաւ ծանր դիտողութիւններ ընել եւ ընտրութիւններուն արդելք հանդիսանալ :

Այս միջամտութեան գլխաւորաբար տեղի տուին յետադիմական-կղերամիտ տարրեր, որոնք կղերական գերակշռութեան համար մեծաւ մը պիտի յաւանդէին, սոյնքարեցան այս հայացի դրութեան դէմ, որուն բնաւ վարժ չէին առնահայ եկեղեցականք, մինչ թրքահայք արդէն վարժ են ու իւրացուցած :

Այս դրութիւնը հաշտ չէր ոռոսահայ եկեղեցականութեան, որ կաթողիկոսին միայն հաճելի ըլլալով, կը բռնանար ժողովուրդին վրայ, չափ անզամ հակառակ անոր կամքին :

Այսպէս, տեսնուեցաւ թէ Սուրբաս Արքեպ. Պարզեանցի պէս իբր թէ աւանդապահ ու Հայ Եկեղեցւոյ իրաւանց պաշտպան հռչակուած եկեղեցական մը եւ իր համախոհները, չվարանհցան հրապարակ դալու եւ ջատագով հանդիսանալու Հայ Եկեղեցւոյ պետին միապետականութեան, եւ թեմերու ընտրութիւնը ապօրէն համարելու :

Արդեօք Սուրբաս եպ. Պարզեան եւ իր յետադիմական համախոհները Մաշտոց ալ

չեն կարգացած, եւ հոն կաթողիկոսական ձեռնադրութեան կարգին մէջ թեմականներուն վկայութիւնը չե՞ն տեսած : Էջմիածնայ մէջ գտնուողները անշուշտ ամենէն աւելի մօտէն գիտակ ըլլալու էին այս արարողութեան մանրամասնութիւններուն : Այս վկայութիւնը, ժողովուրդին խնդրանքը հովոսապետէն որ իրենց այնինչը հովիւ կարգէ, ընտրութիւն չէ, հապախէ :

Եթէ այս միառումները քաջալերուին՝ ոռոսահայ կաթողիկոսի մը, մանաւանդ ա՛յս գաղափարէն կաթողիկոսի մը կաթողիկոսական ակնարարաւորաւոր ռաւջին զօրախտութիւնը ա՛յն պիտի բլլայ որ ժողովուրդին ձայնը եւ հեղինակութիւնը խեղդող Պաշտօնէիս մը խմբադրուելուն տեղի պիտի տրուի, եւ երկրորդ դժբախտութիւնը այն պիտի ըլլայ որ Ռուսահայոց մէջ կղերական եւ հակակղերական բռնուն պայքար մը պիտի ստեղծուի, եւ աղգային բնական զարգացման եւ յառաջդիմութեան արդելք պիտի ըլլայ :

Այս մեր բոլոր ըսածները կը միաւորեն ապացուցանելու թէ ամենայն Հայոց կաթողիկոսին ընտրութիւնէն առաջ մենք ունինք կաթողիկոսական տաքնապալից խոնդիր մը, որ հիմա ամէն ժամանակէ աւելի փափուկ դիրքի մը մէջ է : Մենք սոսկ կաթողիկոս մը չէ որ պիտի ընտրենք, այլ ոռոս կառավարութեան եւ ազգին միջեւ յարաբերութեանց միջնորդ ըլլայիք օրէնքի մը, այսինքն ամենակենսական կարեւորութիւն ունեցող օրէնքի մը բանակցութիւնները վարելու ձեռնհաս բանաւեցաց մը :

Ասանկ փափուկ պաշտօն մը վստահելու համար ուրիշ Իզմիրեան մը չունինք զօրախտաբար, եւ երկրորդական դէմքերու մէջ ընտրութիւն մը ընելու կը վարանինք :

Մենք՝ Թրքահայերս՝ վերին աստիճանի թեթեւութեամբ կը վարուինք այս անգամ՝ մենք որոշ ընտրելի մը չունենալու համար հեռուէն հանդիսատես ըլլալով եւ ընտրութեան ճակատագիրը Ռուսահայոց ձգելով :



Սակայն պէտք է նկատել թէ կաթո-  
ղիկոսական այս ընտրութիւնը վերին աս-  
տիճանի փափուկ բան մըն է, եւ ամէն  
ժամանակէ տւելի զգուշութիւն եւ խնամք  
կը պահանջէ. վասն զի եթէ ապագայ  
կաթողիկոսը չունենայ կորով, հեռատե-  
սութիւն եւ ճարտարութիւն՝ Հայ Եկե-  
ղեցւոյ զէթ այժմեայ դիրքը պահելու Ռու-  
սիոյ մէջ, եւ նուաստացնէ կաթողիկոսու-  
թիւնը եւ իրաւագրկման ենթարկէ զայն,  
հակահարուածը հոս ալ զգալի պիտի ըլլայ,  
եւ մեր անխորհուրդ ընթացքին աղետալի  
հետեւանքները Թուրքահայոց մէջ ալ պիտի  
կրննք:

Թրքահայ պատգամաւորները այս պա-  
րագաները նկատի առնելով պէտք է շար-  
մին, եւ պէտք է որ հանդիպողին հա-  
մուռնին:

Ինչպէս կը տեսնուի արդէն, խմբակ  
մը բուռն ողբերութեամբ կ'աշխատի  
կաթողիկոսացնելու կա'մ Տ. Կարապետ եպ.  
Տ. Մկրտիչեանը կամ Տ. Մաղաքիա Ար-  
քեպ. Օրմանեանը, ուրիշ խումբ մը Տ. Բա-  
ղարատ վրդ. Վարդաղարեանը, եւ աւելի  
ուրիշներ՝ Տ. Մեսրոպ Տ. Մովսէսեան, Տ.  
Գէորգ Սուրենեանց եւ Տ. Խորէն Մու-  
րաթեգեան եպիսկոպոսներէն մէկը:

Բուռն քորքականք կը մղուի, կենսագ-  
րական հատորներ կը բաժնուին, ու ամէն  
տեսակ միջոցներ ձեռք կ'առնուին այս  
ընտրելիները յաջողցնելու համար:

Ասոնցմէ ամենէն աւելի քուէ շահելու  
հաւանականութիւնը կը ներկայացնեն Տ.  
Կարապետ եպ. Տ. Մկրտիչեան, Տ. Բաղա-  
րատ վրդ. Վարդաղարեան, Տ. Գէորգ  
Արք. Սուրենեանց, յայտնի ըլլալով Թրքա-  
հայոց դէպի Մաղաքիա Արքեպ. Օրմանեան  
ունեցած տրամադրութիւնը, Մեսրոպ եպ.  
Տ. Մովսէսեանի եւ Խորէն եպ. Մուրա-  
թեգեանի Թրքահայոց անձանօթութիւնը  
եւ Ռուսահայոց մէջ որոշ շքանակի մը  
չեչտուած հակառակութեան առարկայ ըլ-  
լալը:

Արդ, հրապարակին վրայ մնացող երեք  
ընտրելիներուն՝ ժամանակին պէտքերուն  
եւ կացութեան ո'րքան համապատասխան  
ըլլալը ստուգել եւ վճռաբար ըսել մեզի

չատ դժուար պիտի ըլլայ, քանի որ ա-  
նոնցմէ եւ ոչ մէկը մօտէն կը ճանչնանք:

Մենք հետուէն միայն հետեւելով կազ-  
մած ենք մեր կարծիքը, որ զուգէ սխալ-  
ներ ունենայ, այլ սակայն չենք վարանիր  
ներկայացնելու, իր պատճառաբանութիւն-  
ներովը, ընթերցողին ձգելով դատել:

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊԹԱՃԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

## ՀՈԳՆԻՈՐ ԿԵԱՆՔ

### Ա Ն Ձ Ը Փ Ո Ր Ձ Ե Լ

• Խորձեցք դանձինս ձեր,  
եթէ կայցէք ի նոյն հաւատս:  
(Բ. Կորնթ. ԺԳ. 5)

Առաքեալը մեծ եւ կարեւոր պատուէր  
մը կուտայ Կորնթացիներուն, երբ կը յանձ-  
նարարէ որ իրենց անձերը փորձեն. որով-  
հետեւ իբրեւ Եկեղեցի՝ հաւաքաբար, եւ  
իրքեւ անձ՝ անհատաբար ասկէ կախալ  
էր իրենց զարգացումն ու բարգաւաճումը:  
Արդէն անոնց խօսած էր այն մեծ յոյսին  
համար զոր պէտք էին ունենալ նեղու-  
թիւններու մէջ՝ մխիթարուելու համար  
անով. պահ մը այս մահկանացու ու ապա-  
կանած մարմինին մէջէն դէպի վեր, եր-  
կինքի «անձեռագործ յաւիտենական տու-  
նը» կը դարձնէր անոնց նայուածքները:  
Կը թելադրէր Աստուծոյ շնորհքը ի զուր  
ընդունած չըլլալ, ու իբրեւ Աստուծոյ  
սոցառաւորներ համբերիլ վիշտերու, տա-  
ռապանքներու եւ նեղութիւններու: Կը  
պատուիրէր սուրբ պահել իրենց անձերը  
եւ կ'ըսէր, «Վասն զի զուք կենդանի  
Աստուծոյ տաճար էք»: Ու այս բոլորին  
մէջ կրկին ու կրկին կը պատուիրէր ան-  
տարբեր չգտնուիլ, միշտ ուշադրութեան  
տակ պահել իրենց հոգեւոր կեանքը եւ  
մանաւանդ փորձել իրենց անձերը: Առաք-  
եալին այս պատուէրին կարեւորութիւնը  
աւելի՛ կ'ըմբռնենք, երբ նկատողութեան  
առնենք հետեւեալ կէտերը:

Ա. Մեր հոգեւոր կեանքը: Մեր հոգե-  
ւոր կեանքին վրայ տարակուսիլ՝ մեր  
մարմնաւոր, ֆիզիքական կեանքին վրայ



տարակուսելու չափ բացորոշ սխալ մըն է։ Որովհետեւ ի՛նչ վստահութեամբ որ գիտենք թէ կ'ուտենք, կը չնչնք, կ'ապրինք, նոյն վստահութիւնով գիտենք նաեւ թէ ունինք հոգեւոր կեանք մը, իբրեւ արտայայտում մեր հոգեկան բոլոր կարողութիւններուն, իբրեւ դործունէութիւն մեր ներքին մարդուն։ Այդ բոլորը լոկ դարաւոր բնագոյներու իբրեւ մնացորդ, իբրեւ վախի եւ նախապաշարուած արդիւնք, իբրեւ տգիտութեան պառուզ բացատրել, չիտակը՝ մարդկային բանականութեան դէմ ամէնէն մեծ նախատինք մը պիտի ըլլար։ Ինք իր անձին մասին այդչափ սխալիլ, այդչափ տգիտանալ բոլորովին անկարելի է բանական ըսուած մարդուն համար։ Հետեւաբար մեր հոգեւոր կեանքին պայմանները, զարգացումին ու զօրացումին միջոցները, զայն միշտ առողջ պահելու համար պէտք եղած ջանքերը յետաձգել ու մոռնալ՝ աններելի ու կործանարար զանցադուրիւն մըն է։ Որովհետեւ աշխարհիս վրայ կը գտնուին մարդիկ, որոնք բոլորովին մոռցած իրենց հոգին ու հոգեւոր կեանքը՝ միմիայն մարմնական պէտքերուն ու հաճոյքներուն վրայ կը խորհին, այս տխուր իրողութիւնը համագիշտ փաստ մը չէ մեզի համար մեր հոգեկան պէտքերը չգոհացնելու, եւ հոգեւոր կեանքը մոռնալու։ Կեանքի ճամբուն վրայ շատեր կան, որ զէպի ստորին կեանքի լայն պողոտաները կը խուժեն, եւ քիչեր հոգեւոր կեանքի, սուրբ ու նուիրուած կեանքի բարձրութիւնները մաղցել կը փորձեն։ Բայց այս պատճառ մը չէ հաւատացեալին համար հեռանալու հոգեւոր կեանքի ճամբաներէն, ու մոլորելու տափակ կեանքի մը անապատներուն մէջ։ Մեր հոգեւոր կեանքն է բուն կեանքը մեզի համար։ Միայն ապրելու համար չենք ծնած։ Այլ իբրեւ մարդ, քանակաւ ու հոգեւոր եակ ապրելու համար ծնած ենք։

Բ. Հոգեւոր կեանքը հաւատքի կեանք է։ Մենք կը հաւատանք մեր անձնական փորձառութեամբ տեսած ու հասկցած բաներուն,

կը հաւատանք ուրիշներու փորձառութեանէն յառաջ եկած վկայութեամբ հաստատուած բաներուն, ունինք նաեւ հաւատք մը որ թէ՛ ենթակայական եւ թէ՛ առարկայական տեսակէտներով ներքին է, հոգեկան է։ Արդիւնք-տիեզերքի մը իբր Սկզբնապատճառ՝ Ստեղծողի մը գոյութեան ներքին տրամաբանութիւնով կը յանգինք ու նորէն հոգեպէս կը հաւատանք։ Հաւատքի այս վերջին տեսակը շատ մեծ դեր ունի մեր կրօնական ու հոգեւոր կեանքին մէջ ալ, ու անոր համար կրնանք ըսել թէ հոգեւոր կեանքը հաւատքի կեանք է։ Եթէ կարելի ըլլար ֆիզիկ մեր ներքին համադումները, հաւատքները, ա՛լ հաստատուն կոուսն մը, յենակէտ մը պիտի չգտնուէր մեր հոգեւոր կեանքին։ Մեր երեւակայութեան հետ խաղացած պիտի ըլլայինք, պիտի կործանէր մեր հոգեւոր կեանքի շէնքը։ Եւ մարդ որչափ պիտի լինար իր ճշմարիտ կեանքի բարձրութեանէն։ Ասիկա ճշմարտութիւն է նաեւ դործնական կեանքի մէջ, որովհետեւ հոն ալ հաւատքն է մեծ յաջողութիւններու, դիւստրու ու շահերու ներշնչող զօրութիւնը։ Մեծ գաղափարականներու հաւատքը քանզի՝ մարդկութիւնը քանդել է։ Հետեւաբար հաւատացեալն է որ կ'ապրի հոգեւոր կեանքը խկապէս Սկեպտիկի մը կեանքը իրականութիւն չէ իրեն համար, զգացած ատենը՝ զգար, խորհած ատենը չի խորհիր, կամք ըրած ատենը չի կամենար, հաւատացած ատենը չի հաւատար։ Հաւատքի կեանքը շատ կարեւոր է մեր հոգեւոր կեանքին համար։

Գ. Անձը փորձելու պիտի։ Ուրեմն եթէ կ'ուզենք մեր հոգեւոր կեանքը իբրեւ հաւատքի կեանք զօրացնել, շատ կարեւոր է մեր անձերը փորձել ատեն առնել։ Սոր համար է որ Առաքեալը կը պատուիրէ. «Փորձեցէք ձեր անձերը թէ էք ի հաւատաւ»։ Այդ հաւատքը, այդ հոգեկան համադումները կրնան խախտիլ, կրնան նեղութիւններու, հալածանքներու, սկեպտիկանութեան հովեր ու հեղեղներ զարնել այդ հոգեկան շէնքին, ու կրնան անոր հիմնադրութեան իմաստութեան հա-



մեծատու թիւնով կործանում ստանալ :  
Ինչո՞ւ թափափու տեսական բացատրու-  
թիւններու մէջ, ամէնս ալ ասոր փորձա-  
ռութիւնը չունի՞նք միթէ՞ Միշտ հաւատ-  
քի նոյն բարձրութեան վրայ կը կենանք.  
միշտ հոգեւոր կեանքի նոյն ծաղկեալ  
ովասիաներուն մէջ կը շրջադայինք, միշտ  
հոգեկան մեծութեան թիւերով կը թռ-  
չինք, չունի՞նք նաեւ վայրկեաններ ու-  
րոնց մէջ յաւաստութեան ձորերուն մէջ  
կը թափափինք, աշխարհասիրութեան ա-  
նապատներուն մէջ կը մոլորինք ու զէպի  
անկումի անդունդները կը գահավիժինք :  
Հետեւաբար մշտարթուն պահապանի մը  
պէս պէտք է հսկենք մեր հոգեւոր կեան-  
քին, մեր հաւատքի կեանքին վրայ. չըւ-  
լայ թէ այդ երանութեան Եդեմին մէջ  
սպրդին կասկածի սեւ օձեր, ու խաբկան-  
քի մութ գիշերը իջեցնեն մեր լուսաբաղձ  
հոգիներուն վրայ : Փորձենք մեր անձերը,  
գիտնալու համար թէ ունի՞նք հին հաւատ-  
քը, հին եռանդը, հին կարօտները, հին  
բաղձանքները : Փորձենք մեր անձերը որ  
քունի մէջ չգտնուինք Երկնաւոր Փեսա-  
յին զալուստին առեւն : փորձենք մեր ան-  
ձերը որ յանկարծակիի չգանք չար ծառա-  
ներուն պէս : Հաւատացեալը հսկող մը,  
պահապան մը պէտք է ըլլայ իր հոգիին,  
իր հաւատքին աւանդներուն վրայ : Փոր-  
ձենք մեր անձերը :

ԳՐԻԳՈՐԻՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՍԸ

“ԳԱՐԱԲԱՂԻ,, ՍԱՍԻՆ

Տ. Դնէլ Ծ. Վ. Գալէմբարեան Տա-  
նարի 32րդ թիւին մէջ խօսելով «Սիւն-  
եաց Դպրոց»ի վրայ, Գարաբաղի մասին  
ստուգաբանութիւն մը կ'ընէ հետեւեալ  
կերպով. —

«Երկիրը բարեբեր է մեծ մասամբ, եւ  
հաւանաբար այս պատճառաւ այլադղիներն  
իրենց լեզուաւ յորջորջեցին Գարաբաղ, որ  
կը նշանակէ սեւ այգի, իբր թէ այգիներ

րու շատութենէն մթադնած եւ երկիրն  
ամբողջ այգի մը»

Յարգելի վարդապետը պիտի ներէ ինձ  
ուղղել անճիշդ հասկցուած սեւ այգին :

Սիւնեաց աշխարհի այս անուանի քա-  
ղաքը Թուրքերը կը յորջորջեն ցարդ Շիշէ  
Գալէսի, որպէս շիշի նման սրածայր բերդ,  
իս Հայերը Շուշի, իբրեւ Շիշէի աղաւաղ-  
եալ մէկ ձեւը. իսկ Խորենացիին կ'անուա-  
նէ Իշոց գաւառ, ուրանօր բաղումը են  
մոխրաթաւաններ : Իսկ Գարաբաղ կոչուած  
է՝ Լէնկթիմուրի արշաւանքի առեւն, 1400  
թուին :

Մոնկոլ կայսր Թիմուրէնկ Սըմըրկան-  
դէ մեկնելով Սուրիա արշաւած եւ ամ-  
բողջ երկիրն արիւնի եւ աւերի մատնած  
էր, եւ կը պատրաստուէր յաջորդ տարին  
Երւտըրմի Սուլթան Բայազիտի վրայ յար-  
ձակել, որուն յաղթեց եւ գերի վարեց  
Սուլթանը Գաղատիոյ Սաէլլա լերան ստո-  
րոտը Չիբուքօվաի դաշտին մէջ (1402) :

Նախ քան զպատերազմ, Մոնկոլ կայսրը  
Նախիջևանէ անցնելով ձմրան բանակեալ  
ընտրեց Շուշին, եւ տեսնելով ընդար-  
ձակ այգիները, Գարաբաղ կոչեց դաշն,  
հաւանաբար իր մէկ միլիոնի մօտ բանակն  
հանգչեցնելու եւ գարնան կայծակի նման  
Երւտըրմի վրայ յարձակելու համար :

Գարա, Զէղաթաի բառ է եւ կը նշա-  
նակէ սեւ, միանգամայն իբրեւ հոմանիշ  
խաւարի եւ մթութեան, փոխաբերաբար,  
անեղ, ահարկու, համատաւած, ընդարձակ,  
վիթխարի կը նշանաւէ, զոր օրինակ,  
Գարա ճեհեճեհեւ = Ահարկու մարդ, Գա-  
րա իշշ = Համատարած ձմեռ, Գարա Օս-  
ման = Վիթխարի Օսման, եւ Թիւրքմէնի  
լեզուով Գարա ամ քիւքիւն = Համայն  
ծխակ, սութիւն (բովանդակ ժողովուրդ) :

Հետեւաբար «Գարաբաղ»ը պէտք է  
հասկնալ «Համատարած այգեատարած»  
թէ Սեւ այգի :

ԽԱՉԻԿ Յ. ԱՊՐԵՐԻՍ

ԴԱՐԵԾ

ՎՐԻՊԱՆ

638 եւ



## ԻՐԻԿՈՒԱՆ ԴԷՄ



Ոսկի գունտը Արեւին կ'երթայ Թաղուիլ լուրձ ծովուն  
Թաւիշ ալեակներուն գոգ, ուր գոհարներ կը Թափէ.  
Փրփուրները կ'աթնանայր կուտան համրոյ մը հովուն  
Ու լոյսերուն նրբագիծ զանակներուն սատափէ :

Տերեւին մէջ սնդուսէ, Թռչունները ներդաշնակ  
Նուագ մ'անուշ կը պարեն վերջալոյսի վարդերուն,  
Փսոսուռներն ոսկեգիծ յուզեն քնարն ու դաշնակ  
Բանաստեղծին խանդավառ երազները օրօրուն:

Վերջալոյսը կը մարի ամպերուն մէջ շառագոյն.  
Ժանեակները ծիրանի շուտ կ'անհետին հողմավար,  
Ալեակ մ' յուշիկ կը վազէ դէպի ծովափ սրավար :

Լոյսերուն պէս կը մեռնին երազները գոյնզգոյն,  
Թեթեւներու շուքին մէջ կամ լուսին տակ դողահար:  
Իրիկոնան պէս էի անդ եմ, վերջալոյսին պէս նիհար:

ԴՊՐԵՎԱՆՔՑԻ

## ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ(1)

Անցեալ տարի այս ամիսները հռան-  
դուն կերպով կը յուզուէին եկեղջ. բարե-  
կարգութեան, եկեղեցականաց վիճակի  
բարձրացման, կուսակիցութեան բարձ-  
ման, վանքերը իրենց բուն նպատակին  
ծառայեցնելու եւ այլ խնդիրներ:

Այս ամիսն խնդիրները անցեալ բովան-  
դակ տարւոյն մէջ ձեռնուեցան, եւ գրեթէ  
նոյն տարւոյն հետ ալ մեռան, առանց  
նշմարելի հետք մը թողելու: Ի՞նչ էր  
պատճառը այդ անօրինակ ողբերութեան,  
եւ ի՞նչ ներկայ անհոյութեան, չըսենք  
մոռացութեան: Որովհետեւ անցեալ տարի  
հակահոսանք մը ստեղծուած էր Եկեղե-  
ցիին դէմ, կրօնին դէմ, Հայ ընտանեկան  
բարոյականին դէմ, ու բնին հայրենատիրու-  
թիւնը, եկեղեցատիրութիւնը, կամ կրօնա-  
սիրութիւնը շատ աման կը ծախուէր: Շատ  
շատ մէկ երկու ժամ միտք յողնեցնելու եւ

զրիչ շարժելու խնդիր մը, եւ լմնցաւ: Մեր  
մէջ շատ խնդիրներ, մանաւանդ կենոս-  
կան խնդիրներ, այսպէս կը յուզուէին եւ  
այսպէս կը վերջանան զժախտաբար: Մե-  
զի անպատճառ ազդակ մը, խթան մը, հա-  
կամարտութիւն մը, կամ վերջապէս կոխ  
մը պէտք է՝ մեզ ոգևորելու, գործի մղե-  
լու: Խօսքի մղեցող ըսել կ'ուզեմ, քանզի  
մենք դիւրաւ գործի չենք մղուիր: Առանց  
առտնայ մենք չենք արթննար, իսկ արտա-  
քին ազդեցութեամբ գործի մղուին ալ  
տեսական հանգամանքէ զուրկ կ'ըլլայ,  
վասնի զի գործին աւագ կարեւորութիւնն  
ըմբռնելու գիտակցութեամբ եւ պաղար-  
եամբ չէինք մղուած, այլ մղած էին մեզ:  
Դադրեցաւ պատճառը կը դադրի նաեւ ար-  
դիւնքը: (1)

(1) Սկզբնաւոր իրաւունք ունի Պատ. Յօդուածա-  
ցիրն իր դիտողութեանց մէջ. բայց եկեղջ. բարե-  
կարգութեանց խնդրոյն յետաձգման գլխաւոր պատ-  
ճառը զգին շատ աւելի ստիպողական, կենսական  
խնդիրներու ծանրութեան տակ ճնշուած ըլլալն  
էր մահու մէկ կենաց ատենակալ մէջ գտնուող ժողո-  
վուրդ մը չի կրնար ժամանակ գտնել այդ կարգի  
խնդիրներով զբաղելու: Ամենայն Հայոց Վեհ.  
Հայրապետին մահն ալ ուրիշ պատճառ մ'եղաւ խն-  
դիրը մոռնալու: Բայց մեզի համար օրուն հայոց է  
միշտ Եկեղեցւոյ բարեկարգութիւնն անաչ  
Եկեղեցականութեան բարեկարգումը. Եւ այս  
եղանակով է միշտ մեր համոզումը: Ծ. ԽՄԲ.

(1) Ընթերցողներու լուրջ ուշադրութեան կը  
ներկայացնենք շատ հեռուոր վայր մը՝ Ամերիկայի  
Քրօֆիաէնս քաղաքը բնակող, բայց ազգասէր ու  
անկախ Հայու բար սիրտ կրող անձնատու-  
րէն Կողմէ գրի առնուած ներկայ յօդուածը,  
որովհետեւ անհետ Եկեղեցւոյ մէջ լուսն  
Եկեղեցականութեան եւ բնական վիճակի  
Ծ. ԽՄԲ.



Խնդիրներ կան որոնց լուծումը ժամանակի, նիւթական եւ բարոյական գոհողութիւններու կը կարօտի, որով անոնց անմիջական լուծումը անկարելի կը դառնայ: Խնդիրներ ալ կան որ, ո՛չ ժամանակի, եւ ո՛չ ալ նիւթական մեծածախ գոհողութիւններու կը կարօտին. այլ հաստատ համոզում՝ գործին կարեւորութեան, եւ քիչ մըն ալ արի ու բարի կամեցողութիւն պիտի բաւեն շատ մը խնդիրներ, եթէ ոչ հիմնական, զէթ ըստ բուսականին կարգադրելու, լուծելու:

Ներկայ գրութեամբս յաւակնութիւնը չունիմ տիրական կարծիք մը յայտնելու: Բա՛ւ լիցի, այլ իբրեւ Հայ Եկեղեցւոյ յետին մէկ զաւակը, իմ խոնարհ մտածումս կը փափաքիմ արտայայտել՝ նամակի մը, եւ Տաճարի Ձորը թուոյն մէջ անստորագիր քահանայի մը սրտառուչ գրութեան տխուր ապաւորութեան տակ, ո՛ւր Տաճարի արժանայարգ խմբագիրն ալ կը հրաւիրէր իր Պատ. աշխատակիցները, որպէս զի իրենց թեր ու դեմ կարծիքները գրեն:

Տաճարի աշխատակից մը չըլլալով, գուցէ այս գրութիւնը անկող հիւրի մը ապաւորութիւնը թողու խմբագիր Տէր Հօրը վրայ(1), բայց ատով պատճառ չունինք ամբողջութեամբ թէ հաւասարապէս պիտի հիւրընկալէ նաեւ սոյն գրութիւնն: Մենք վերը յիշուած խնդիրներէն քահանայապետներ նկատի պիտի առնենք, իբրեւ անմիջական կարեւորութիւն ունեցող եւ միանգամայն դիւրաւ լուծելի խնդիր մը, ըստ մեզ կարծեաց: Ինչպէս վերը յիշեցինք, ասոնք աստիճանաբար միայն պիտի գրունեն իրենց լուծումը, բնաշրջական օրէնքով:

\*\*\*

Բարեկամ մը իր ծննդավայրէն ստացած մէկ նամակը ինձ տալով՝ ըսաւ. — Կարգա՛ աւանանք դուն ի՞նչ կը խորհիս

(1) Անկեղծ եւ օգտախնդիր նպատակով մը ուղղուած, եւ մասնաւորապէս կրօնական ու բարոյական հարցեր շօշափող գրութիւններու առջեւ Տաճարի սխեմները լայնօրէն բաց են միշտ:

այդ մասին: Նամակին մէջ կը գրեն թէ «Մեր գիւղին քահանան մէկ հատ մըն է, բայց՝ ինչպէս գիտես՝ միշտ երկուք եղած է, կը փափաքինք որ դարձեալ երկուք ընենք, եւ այդ ընծայացուն ալ դուն պէտք է ըլլաս, որ դոնէ լուսահոգի հօրդ յիշատակը չկորսուի, ուստի եթէ կարելի է եկուր»:

Քանի մը ամիսներ ատաջ նոյն գիւղին քահանային մէկ նամակը կարդալս միտքս ինկաւ, որով դառնապէս կը դանդաղէր իր ապրուստին, ժողովրդեան անտարբերութեան մասին. «Ես քահանայ օծուելէս ատաջ, կ'ըսէր, դոնէ ճակտիս քրտինքով ընտանիքս կ'ապրեցնէի՝ այսպէս թէ այնպէս պատուաւոր կերպով օրագրահիկ մը ճարելով. գիւղացիք ինծի ամէն ապահովութիւն տուին, ես ալ՝ սա՛ ժողովուրդը ներդրեմէն ազատեմ, ըսելով համակերպեցայ, բայց եկուր տես որ ինքզինքս ալ կամովին թշուառութեան մասնեցի, այժմ քահանայ վիճակովս որմէ՞ կրնամ երթալ գործ մը խնդրել»:

Երկու հազընդդէմ երեւոյթներ: Ժողովուրդը պատճառ կ'ըլլայ, եռանդուն երիտասարդ մըն ալ կամք ու փափաք կը միացնէ, սակայն չուտով ծայր կուտայ մէկ կողմէն լքումը, միւս կողմէն յուսախաբութիւնը. սովորամոլութիւնն ալ ուրիշ կողմէ մը կը պնդէ թէ ուրիշ մըն ալ պէտք է թշուառացնել: Ի՞նչ է ասոր պատճառը, որովհետեւ իրար չեն կրնար ամբողջացնել, իրաքանչիւրը իր գերն ու պարտականութիւնը չի ճանչնար, ոչ թէ անոր համար որ չուղեր, այլ չի գիտեր թէ ի՞նչ է իր պարտքը, եւ ի՞նչ իր իրաւունքը:

Այս խնդիրները մտացս մէջ երկար տարուբերելէ յետոյ, հետեւեալ մէկ քանի կէտերը գտած եմ իբրեւ դարման. Նախ քահանաներ պատրաստելու, կամ եղած խնդրանքներու անմիջական գոհացում տալու համար, մինչեւ որ կրթութիւնը ընդհանրանայ մեր երկրին մէջ եւ ժամանակը կը պատրաստէ գործին մարդը, մենք պէտք է առժամանակեայ կարգադրութիւններ ընենք եւ միջոցներ խորհինք, զէպի աստի-



ճանական բարեկարգում տիրող անկերպարան եւ աննախանձելի կացութեան։ Այսպէս՝ նախ բարոյական կողմը առնենք։

1. Մասնաւոր եւ ամենատարրական գիտելիքներու համար խնամեալ հրահանգ մը պատրաստել, դաւառներու եւ գիւղերու մէջ այս ու այն արհեստաւորը կամ երկրագործը կրօնականութեան կոչուելու պարագային, իբրեւ անմիջական դասընթացք։ Այդ հրահանգին մէջ որ հմուտ եւ կեղեցականի մը (նախընտրելի է դաւառներու մէջ պաշտօնավարած փորձ կեղեցական մը) կողմէ պէտք է պատրաստուի, խտացած պէտք է ըլլան քահանային պարտականութիւնները՝ առ կրօն, առ Հայ Եկեղեցին, առ Հայ ժողովուրդն եւ Հայ ընտանիքը, առ ազգն եւ՝ առ հայրենիքն, միշտ նկատի ունենալով թէ՛ պաւստոստոն խորրը տակաւին քահանան Հայուն համար քահանայ է, դատաւոր է, գրագիր է, փաստաբան է, բժիշկ է, խոստովանահայր է, մէկ խօսքով անիկայ իր ներկայացուցած գիւղին կամ ավանին հոգեւոր եւ բարոյական հայրն ու ներկայացուցիչն է։ Այս հրահանգը պատրաստող հայրերը բնաւ նկատի առնելու չեն Պոլիսն ու լուսաւորուած ուրիշ քաղաքներ, ուր բազմաաւար զարգացած կղերներ աւելի շատ են, կամ զարգանալու պատեհութիւններ պակաս չեն։ Այս վերջիններուն համար գուցէ այս թելադրութիւնները ծիծաղելի թուին, բայց ո՛չ անոնց համար որոնք ցաւ ի սիրտ կը զգան թէ ասոնք անհրաժեշտ են։

2. Վիճակաւոր կամ անվիճակ բոլոր բարձրաստիճան կեղեցականաց պատուիրել որ քննառ եւ է ընծայացու չձեռնադրին, մինչեւ որ՝

Ա. Ընծայացուն ի բնէ ընթերցասէր չըլլայ։

Բ. Անսխալ կարգաւ գրել չգիտնայ։

Գ. Հայ. Եկեղեցւոյ կարգաց եւ օրինաց վրայ գոնէ տարրական գաղափար մը չունենայ։

Դ. Իրեն տրուած վերոյիշեալ հրահանգները սորված ու մարսած չըլլայ, եւ առայդ մասնաւոր քննութիւնէն յաջող դուրս չգայ։ (Չմոռնալ յիշել թէ սոյն հրահանգ-

ները շատ պարզ եւ դիւրահասկանալի ըլլալու են)։

3. Իւրաքանչիւր Առաջնորդութիւն, իր վիճակին մէջ, տարին մէկ կամ երկու անգամ, իր (Առաջնորդին) կամ իր մէկ հըմուտ ներկայացուցիչ-կեղեցականին միջոցաւ, գիւղերը շրջան մը ընկելով մասնաւոր վայրերու մէջ քահանաները հաւաքել, անոնց բարոյական համարաստուութիւնը լսելէ յետոյ, կրօնական դասախօսութիւններ ընել, անոնց քարոզել եւ ուսուցանել թէ ի՞նչպէս պէտք է կատարին իրենց պաշտօնն ու պարտականութիւնը, եւ առայդ յաջողու գաղափարները։

Մենք ազեղ սովորութիւն մը ունինք որ միշտ տկարը կը հարուածենք, կը քննադատենք, առանց մենք զմեզ պահ մը անոնց գտնուած պայմաններուն տակ դընելու, որ գիմացինը կշռելու ամենէն արդար կերպն է։ Շարունակ կը զանգատինք թէ Հայ քահանաները տգէտ են, անուս են, ծոյլ են, եւայլն են։ Որովհետեւ է յանցանքը, ի՞նչ ենք տուեր անոնց եւ ի՞նչ կը պահանջենք։ Քահանաներ կան, եւ շատեր են անոնք, որ ձեռնադրուած պահուն միայն քանի մը խօսք խրատական լսած են զիրենք ձեռնադրող եպիսկոպոսէն, մինչդեռ հնձելու անհրաժեշտ պայմանն է ցանկ, ցանկ'լ։ Մեր պահանջները անբնական եւ սպօրինի պահանջներ են։ Կ'ընդունիմ թէ իրենց կոչումն ու պարտականութիւնը պիտոյզ եւ կամովին անտեսող ապիքատներ ալ կը գտնուին բացառաբար, բայց մեր խօսքը ընդհանուր առմամբ է։

Լուսաւորեալ Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ անպամ, ուր կեղեցականները համալսարանականներ են, դարձեալ չեն բաւականանար իրենց գիտցածովը, եւ շարունակ իրենց հաւաքոյթները, կրօն. դասախօսութիւնները, փորձագոթութեանց փոխանակութիւնները կ'ունենան, գոնէ մէկ կամ երկու տարին անգամ մը։ Չեն բաւեր, բարեկամներ, չեն բաւեր, երեմիական ողբեր եւ լալահառաչ կոչեր՝ հետզհետէ ուժացող ժողովուրդը Եկեղեցիին մօտ բերելու համար, զորք պէտք է, զորք, չօչափելի արդիւնք քաղելու համար ժողո-



վերջը հովուելու կոչուող կղեր մը ամէն բանէ առաջ պէտք է իր դաւանած ու քարոզած սկզբունքներուն կատարեալ մարմնացումն ու օրինակը հանդիսանայ . մէկ կենդանի օրինակ տասը փաստ կ'արժէ:

Մենք կը ծանօնանք շատ քահանաներ որ եկեղեցիէն դուրս գիրք կամ լրագիր ձեռք առած չեն, բան մը սորվիլ եւ ժողովուրդին հրամցնելու համար, մինչդեռ երկար ժամանակ կը զաննեն օխաներով ծխախոտը սիկարէթի եւ ծուխի վերածելու:

Ասոր համար էր որ իբր առաջին պայման ըսինք թէ քահանայք ի ընէ ընթերցասէր ըլլալու են, եւ իրենց կարգացածը նախ իրենք հասկընալու են, մինչդեռ մեր եկեղեցիներուն մէջ քահանաներէն շատեր, մահաւանդ գիւղերը, եկեղեցական արարողութիւն կատարելը մասնաւոր բեռ մը նկատելով կը սկսին, եւ աւելի կը լպրտեն քան կը կարգանա Մեղմէ շատերս ալ եկեղց. արարողութեանց դրաբառ ըլլալուն կը դանդաւորնաք, ըսելով թէ ժողովրդեան անհասկնալի են եւայլն, մինչդեռ յստակ առողջանութեամբ կարգացող մը հիմնալիօրէն պիտի կրնայ հասկանալի ընել սաղմոսերգութիւն մը կամ Սբ. Աւետարանը, որոնք այնքան ալ անիմանայի գրաբառներ չեն վերջապէս, եթէ կարգացողը իրապէս ըմբռնած ըլլայ թէ ինչու կը կարդայ զանոնք:

Նոյնպէս եկեղեցական օրէնքներն ու սովորութիւնները այնպիսիներուն կողմէ սխալ կամ ըստ հաճոյս եւ շահախնդրական միտումներով կը մեկնուին, որով հաւատացեալ ժողովուրդին մէջ գայթակղութեան եւ թերահաւատութեան առիթներ կը ստեղծեն, թէ՛ զիրենք եւ թէ Հայ եկեղեցին հակասութեան մէջ ձգելով. ասոնց օրինակները Ամերիկահայ կղերները ամենէն շատ հայթայթած են, որոնց մանրամասնութիւնը սակայն մեզ շատ հետուները պիտի տանելու:

\*

Այժմ վեր անենք նիւթական կողմը, եւ տեսնենք թէ ինչպէս կրնանք բարձրացնել Հայ կղերականութիւնը եւ մաս-

նաւորապէս քահանայութիւնը՝ իր ներկայ անկեալ վիճակէն:

Մեր մէջ չկայ հանրային ծառայութիւն մը կամ պաշտօն մը, որուն վարձատրութիւնը կամ փոխարէնութիւնը այնքան անորոշ եւ անպայման ըլլայ, որքան Հայ եկեղեցականութեան եղած նիւթական վարձատրութիւնը: Հանրային ծառայութիւնները կամ բացարձակ ճրի եւն՝ իբր բարոյական պարտականութիւններ, կամ մասամբ վճարուած պաշտօնէութիւններ, մինչ եկեղեցականութիւնը ո՛չ օրէնք ունի զծուած իրեն համար, ո՛չ կանոն՝ իր վարձատրութեան չափն ու սահմանը որոշող: Այս պայմաններուն տակ ինչպէս պէտք է ակնկալել որ արժանաւորներ յօժարեալ ստանձնեն սքեմակրութեան ծանրատար խաչը. ի հարկէ չպիտի յօժարին, եւ կամայ ակամայ ասպարէզը պիտի մնայ երկրագործութենէ կամ կօշկակարութենէ եւ կողներու:

Որպէս զի այս անորոշ ու աննախանձելի կացութիւնը միանգամ ընդ միշտ վերցուի, եւ ասպարէզը իսկապէս արժանաւորներու համար ալ փափաքելի ըլլայ, նախ պէտք է լուծել հացի խնդիրը, եւ վերջնել զայն ընդգրկողներու մտքին տիրապետող մղձաւանջը, որով պաշտօնը կը դադրի շահախնդիրներու համար շահաստան մը, եւ անշահախնդիրներուն համար ալ մտահոգութիւն մը նկատուելէ: Այս խնդիրն ալ լուծելու համար մենք կ'ըսենք թէ նոյնպէս կամք եւ գործունեութիւն միայն հարկաւոր է: Թէ ինչպէս:

1. Մասնակարարական կամ Տնտեսական խորհուրդի մը կազմութիւնը, ո՛չ թէ Պատրիարքարանի պիւսթէին հսկելու պաշտօն ունեցող խորհուրդին նման, այլ աւելի ընդարձակ իրաւասութիւններով, նոյնպէս եւ իւրաքանչիւր դաւառի մէջ առաջնորդներու հսկողութեան տակ, որոնց պաշտօնը պէտք է ըլլայ. — Ա. Իւրաքանչիւր վիւղի կամ թաղի եկեղեցւոյ շարժուն կամ անշարժ կալուածներու մանրամասն հոլցումը պատրաստել, եւ անոնց տարեկան բերած հասոյթներու միջին չափը որոշել: Բ. Եկեղեցական ամէն կալուած հա-



սուլթաններ վիճակի վերածելու միջոցները անօրինակ Գ. Եկեղեցիներու եկամուտները, ըլլան անոնք հաստատուն կամ պատահական, խիստ հակակշիռի տակ առնել՝ որոշ պատահականություններով: Գ. Վանքերու կալուածները ազատել մասնաւորներու շահասանրը ըլլալէ կամ ձրիակներու ծառայելէ:

2. Սոյն մարմինը, ու եւ է տեղէ եկեղեցականի մը խնդրանք ըլլալու կամ ընծայացու մը ներկայացուելու պահուն, ի վիճակի ըլլալու է անմիջապէս տեղեկագրելու պատկանեալ հոգեւոր իշխանութեան թէ եկեղեցական պահանջող Եկեղեցին կամ ժողովուրդը բաւականաչափ եկամուտ ունի՝ իր եկեղեցականին թոշակը ապահովելու: Հակառակ պարագային պէտք է բաւականանայ հնարաւոր կարգադրութիւնով:

Վերը յիշուած կէտերու մասին քիչ մը աւելի ընդլայնում գուցէ աւելորդ չըլլայ: Հայ ժողովուրդը ի բնէ բարեպաշտ եւ ողորմասէր ժողովուրդ մըն է: անոր Եկեղեցիներն ու Վանքերը եւ անոնց կալուածներն ու եկամուտները ասոր պերճաբարբառ վիճակն են: Բայց այդ կալուածներն եւ եկամուտները ըստ արժանւոյն մատակարարել եւ օգտակարապէս գործածել կարելի չէ եղած ցարդ, կամ լաւ է բոլոր լծաւ փորձը եղած չէ, մեծ մասամբ աննպաստ պարագաներու բերմամբ, որով անոնք յաւելաւ այս ու այն կերպով իւրացուած կամ կորսուած են, շատ աննշան հետք մը թողելով իրենց ետին: Ամէն ուշիմ եւ հետաքրքիր Հայ կրնայ վկայել ասոր, բայց որպէս զի մոտացածին չեկատուին այս խօսքերը, օրինակ մը մէջ կը բերեմ:

Սերառախոյ Հաֆիզ գաղայի Եսրէփաթը զիւզը, մեր ծննդավայրը, 18-20 տարիներ առաջ մօտաւորապէս 150-200 ոսկի արժողութեամբ կալուած կամ զրամ ունէր, իրիւ եկեղեցւոյ արտած նուէրներ եւայլն, որոնք մատակարարութիւնը մի քանի խեղճ գիւղացիներու, եւ անոնցմէ ալ ամէնէն ճարպիկին ձեռքը խաղալի եղած է տարիներով: Այժմ կը լսենք թէ ոչինչ

մնացած է, նոյն իսկ իւզի ու մամի համար: Ինչպէս անիկայ արդիւնաբերութեան միջոցներով պիտի կրնար մէկ երկու քահանայի համեստ թոշակ ապահովել: Ասիկայ կը հաւատանք թէ ամէն Հայ Եկեղեցի պիտի տեղի համար, ճշմարտութիւն է, մեծ քաղաքները բացառութիւն հաշուելով, նոյն եղանակով ու մեթոտներով կը կառավարուին մեր հոկայ վանքերն ու միապատանները, որ այլապէս շահագործուելով աննպաստ եկամուտներու աղբիւրներ կրնային ըլլալ շինարար ձեռքերու մէջ:

3. Եկեղեցիներու նուէրները, մոմագին, իւզագին, եւայլն, պէտք է շարունակ բարդել եկեղեցւոյ հասոյթին վրայ: Նոյնպէս միւրութեանց, պսակապիտութեանց, թաղմանց յատուկ նուէրները՝ ուղղակի կղերներու անուան եղած, ինչպէս նաեւ այդ նպատակով չընտրուած պահներու հասոյթները, եւ վերջապէս այն բոլոր անուղղակի հասոյթները որ կղերին յատկացուած են, պէտք է ուղղակի բարդել եկեղեցւոյ մայր հասոյթին վրայ: Կղերը բացի իր թոշակէն ու եւ է նուէր պէտք չէ ստանայ, կամ պէտք է պատկանեալ տեղը յանձնէ (1): Այսպէսով կղերն ալ իր կոչումին խղճմտօրէն կը ծառայէ, առանց Խորհուրդ մը կատարած պահուն միտքն ալ ուրիշին գրպանները զեղերեցնելու: Այդ եկեղց. հասոյթներն ալ անշուշտ կ'ունենան իրենց որոշեալ սակերը, ըստ աստիճանի ժողովրդեան կարողութեան, եւ այդպէսով քմահաճօրէն «ինչ որ սրտէզ լողկոց այն տուր» անորոշութիւնն ալ միանգամ ընդ միշտ վերցած կ'ըլլայ:

Ասոնք շատ կրնայինք մանրամասնել, եթէ սոյն զրոյթները տարապայման երկարած չըլլայ: Ան այժմ կը կարծենք որ

(1) Պատ. յօդուածագրին Սելադրուքիւններուն օգտակարութիւնը ընդունելով հանդերձ, կոսակածներ ունինք անոնց որ տոտիւն գործադրելի ըլլալուն վրայ: մասնաւորապէս եկեղեցւոյ տնային եւ քահանայական հասոյթները տնային թաղմանց միջոցով կապուելու զրուքները տնային մէջ որքան օգտակար, նոյնքան ալ անգործադրելի կը զուլ մեզ: Այս մասին գրելիքներ ունինք, ինչպէս խոստացած ենք արդէն:




եթէ նկատի անուին, աւելի ձեռնհասներ չատ յաջող կերպով կրնան պարզել. բայց ծանօթ ըլլալով մեր Արեւելքցիի յատուկ թուլութեան ու անտարբեր անհոգութեան. չատ ալ չենք հաւատար թէ նկատի պիտի առնուին Աստուծոյ գործի արինք, վեր ի վերոյ զազալար մը տուած ըլլալու համար թէ զօրաւոր կամքով եւ փոքրիկ զոհողութիւններով կատարուելիք հսկայ գործեր կան բարձի թողի եղած, որոնց կարգադրուիլը պատիւ պիտի բերէր մեզի, վերջնելով իսպառ մինչեւ ցարգ արեւոյ տպել սովորութիւնները, որով յանդիմանի կը պահանջենք որ մեր կղերները, պաշտօնականները կամ զպիւրները Սբ. Հոգիով անսնող եւ անձնուիրարար ծառայող մարդիկներ ըլլան: Զրի ծառայութիւն ակնկալելը մուրացկանութեան պէս բան մըն է, որ ինչ ասոնես անով պէտք է դո՛ւնատ, որուն հետեւանքն ալ կ'ըլլայ գահալէժ անկում:

Ժամանակ է որ սթափինք մեր անտարբերութիւնէն, հետեւինք լուսաւորեալ ազգերու ընդդրեալ յառաջագէտ սկզբունքներուն, եւ շուտով դարմանենք այս արեւոյ վիճակը: Հակառակ պարագային զեռ շատ պիտի լսենք ու կարգանք վերը յիշուած նամակներուն պէս նամակներ, եւ շատ պիտի տեսնենք առաջնորդներ կամ եղիսկոպոսներ որ վաղը նորէն խղճի կատարեալ հանդարտութեամբ եւ առանց մանրամասնութեանց հետամուտ ըլլալու «ստամ քեզ իշխանութիւնը» պիտի ըսեն այս կամ այն ընծայացու ներկայացողին. մինք ալ նոյն խղճի հանդարտութեամբ պիտի շարունակենք հանդիսատես ըլլալ մեր ոչքին առջեւ պատկերացող այս բարձրացու մտերուն ու անկումներուն:

Այս խորհրդածութիւնները նկատի առնուին կամ ո՛չ, գոնէ խղճի պարտականութիւնէ մը ազատ կը զգամ ինքզինքս՝ զսնունք հրատարակութեան առաջով:

Ն.Կ. Թ. ԽԱՇՄԱՆԵԱՆ

Brooklyn



## ՍԱՍՈՒՆԻ ՏԱՌԱՊԱՆԵՐ

ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆ ՄԸ

Ինչպէս Տաճար կրօնաթերթի 35րդ թիւին, նոյնպէս ազգային ուրիշ թերթերու մէջ շատ անգամ կը կարգամ թէ Հ. Բ. Ը. Միութիւնը Սասունի աղքատ Հայերուն նիւթական ու բարոյական փճացած վիճակը բարւոյցելու համար նպաստի կարեւոր դու մարներ կը յատկացնէ:

Արդեօք բարեխնամ Միութեան ըսած Սասունը ո՞ր տեղն է. եթէ մեր գիտցած Փառնաց գաւառն է, ստոյգ աղբիւրներէ կրնամ հաւատաւել թէ՛ հակառակ իր բազմատեսակ կարօտութեանց, ցարգ եւ ո՛չ մի տեղէ զբամական օգնութիւն չէ ստացած: Թէեւ Մշոյ Առաջնորդարանին քանիցս զիմումներ եղած են այդ մասին, բայց չենք գիտեր թէ ի՞նչ արդելիչ պատճառներով է որ ցարգ այս ոչ նուազ կարեւոր թեմին հարկ եղած նիւթական ու բարոյական աջակցութիւնները կը զլացուին:

Սասնոյ Փառնաց գաւառի զայնուգամութիւնը կաղմով 50 կտոր մեծ ու փոքր Հայ գիւղերու բնակչութիւնները ուսման ու գիտութեան ամենատարրական բարիքներէն անգամ զո՛ւրկ, խոր աղիտութեան մատնուած, յետին ծայր չքաւորութեան մէջ կ'ապրին: Սասունի այս տարաբախտ գաւառը սկիզբէն ի վեր անմասն մնացած է Մշոյ Առաջնորդարանի հասցէին զրբկուած ամէն հանգանակութեանէ կամ նըպաստներէ:

Ուստի, իբրեւ Սասունցի, կը փափագիմ որ գոնէ քանի մը կեդրոն գիւղերու մէջ, ինչպէս՝ Գամբ, Մշիւղ, Թարուգ եւ Խաչերք գիւղերը՝ որոնք 50 տունէ պակաս չեն, ունենան իրենց տարրական դըպրոցները, Տարօնոյ շատ մը գիւղերու նման: Միւս կողմանէ Փառնաց գաւառի երկրագործներն եւս վայելեն՝ համահաւասար իրաւունքով մը՝ նիւթական այն չընորհները զորս կը վայելին Մշոյ չրջակայ գիւղերու հայ երկրագործները:



Միթէ արդարութիւնն է որ Թաթ-պատրիկցին, որուն հոգին ու ստացուածքն ամբողջովին յանիրաւի գրաւուած է, այժմ մերկ ու անօթի ասղանդական թափաւի, եւ անդին Մշեցին ու Տարօնցին ամէն տեսակ զրամական օգնութիւններ վայելեն: Կարծեմ թէ Մշոյ երեսփոխանն անգամ ինդճ Թաթպատրիկցիի արդար բողոքին տրձագանդն եղաւ Օսմանեան Երեսփոխոյ մէջ, եւ սակայն եկած նպաստներու բաշխման ժամանակը, չի զիացուիր թէ ինչո՞ւ համար մոռացութեան կը մատնուի խեղճ Փանցին, որ ճշմարտապէս արժանի է ազգին ամէն տեսակ նպաստներուն ու հանդանակութեանց: Վէրքն երբ ստէպ չփոխուի ու անկ եղած խնամքը չտարուի, վտանգաւոր հետեւանք մը կ'ուենայ, որուն բուժումը եթէ ոչ անկարելի, գէթ խիստ դժուարին կ'ըլլայ:

Սասնոյ արդի վիճակը այս օրինակ հանդամանք մը ստացած է եւ անմիջական խնամքի կը կարօտի. որուն համար Հ. Բ. Ը. Միութեան ու Միացեալ ընկերութեան աջակցութիւնը կը հրաւիրեմ անյապաղ:

ՄԿՐՏԻՉ ՔԶ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Հաղեպ

### Խմբագրութիւն «Տաճաւ»ի

Մեր պատուական աշխատակիցը լուսաբանելու համար, անհրաժեշտ կը համարինք գիտել տալ որ Հ. Բ. Ը. Միութեան նպատակն է իր նպաստը հասցնել ամենէն մութ, լքուած անկիւններ, ուր ամենէն աւելի կարօտութիւն կայ. բայց Սասնոյ շրջանակին մէջ իր կողմէ կարգուած քննիչ մը չունենալով, նպաստները զրկուած են ցարդ Մշոյ առաջնորդարանին միջոցաւ, ուր կ'երեւայ թէ գիմող աղքատներուն գոհացում տրուած է, առանց մանրակրկիտ ֆոնդօշի՝ նպաստը հասցնելու համար ամենէն աւելի կարօտեալ տեղերը: Հաւաստի աղբիւրէ կ'իմանանք թէ այս անպատեհութեան առաջը անհետեւ համար, Հ. Բ. Ը. Միութիւնը մտադիր էր իր կողմէ յատուկ քննիչ մը սահմանել այդ շրջանա-

կին. բայց միւս կողմէ Միացեալ Ընկերութիւնը իր պատրաստութիւնը շրջանակի վարժարաններուն ընդհանուր տեսուչ մը զրկել: Ուստի կրկին ծախք չըլլալու համար Միացեալ ընկերութիւնը առաջարկած է այդ երկու պաշտօնները միացնել միեւնոյն անձին վրայ, եւ կը հաւաստուի թէ Հ. Բ. Ը. Միութիւնն ալ ոկղբամբ հաւանութիւն յայտնած է այս առաջարկին: Կը մնայ միայն նոյն Միութեան Կեդր. Վարչական Ժողովին վերջնական վաւերացումը, ծրագրեալ կարգադրութիւնը գործնականացնելու համար: Ապահով ենք որ այդ վաւերացումը չի յապաղիր այլեւս, եւ Սասունի գաւառին ամենէն յետեւեալ եւ կարօտ գիւղերը կ'ունենան հաւաստեալ իրենց վարժարանները եւ իրենց սուօրեայ ապրուստին անհրաժեշտ տարական միջոցները:

## ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՄՍՈՒԹԻՒՆ (1)

Ը.

«Աստուծոյ կամքին այս համակերպութիւնն է որ մեր գերագոյն օրէնքը կը նկատենք, շարունակեց Պամփիլիոս: Այն մարդիկը որ չեն ուզեր կամ չեն կրնար մարդ ըլլալ բառին ճշմարիտ իմաստով, երջանիկ կը համարին ինքզինքնին՝ հպատակ մնալով այս կամայն Պետութեան, եւ կամ անգամ այս կամ այն ընկերութեան: Հետեւապէս ասոնք բնական հակակրօնութիւն մ'ունին բոլոր անոնց դէմ, որոնք բարձրադու չկը հռչակեն թէ մարդ չատ աւելի բարձր ճակատագիր մը, աւելի՛ ազնիւ պաշտօն մ'ունի կաթարելիք: Այս պիսիները՝ անկարող ըլլալով նշմարել, կամ ակամայ ընդունելով թէ այդ բարձր ճակատագիրը կրնայ իրենցը ըլլալ, կը մերժեն զայն ճանչնալ նոյն իսկ ուրիշներուն համար: Քրիստոս ատենց վրայ խօսելով ըսաւ. «Վա՛յ ձեզ օրինականներ,

(1) Շար. 22րդ թիւէն սկսեալ:



որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը կը փակէր մարդոց առջեւ. զուր չէր մտնել, եւ մանողներուն ալ թոյլ չէր տալ»։ Ասո՛նք են առաջին չարժաոթիթներն եւ զորդիչներն այն հալածանքներուն որ զարմանք կը պատճառէ ձեզի։ Մենք չենք սնուցանել հակակիր զգացումներ՝ ոչ մէկուն դէմ, նոյն իսկ անոնց դէմ որ մեզի կը հետապնդին ու կը հալածեն։ Մեր ապրելու կերպը չի մնասեր ոչ ոքի։ Եթէ մարդիկ զրգուռած են մեզի դէմ, եթէ ատելութեան զգացումներ կը սնուցանեն մեր մասին, ատոր միակ պատճառն այն է որ մեր կեանքը կենդանի յանդիմանութիւն մըն է իրենց համար, դատապարտութիւն մը իրենց անուղիղ վարքին։ Մեր կարողութեան սահմանին մէջ չէ վերջ դնել այս հակակրօթեան որուն պատճառը մեզմէն չէ, որովհետեւ չենք կրնար դադրիլ ուսումնասիրելէ ճշմարտութիւնը զոր արդէն հասկցած ենք, չենք կրնար մեր խղճին եւ դատողութեան հակառակ վարուիլ։ Գալով այն հակակրօթեան որուն հետեւանօք ուրիշներ կը թշնամանան մեզի դէմ, մեր Տէրը ըսած է այդ մասին. — «Մի կարծէք որ ես եկած եմ խաղաղութիւն բերելու համար, ո՛չ, այլ պատերազմ»։ Քրիստոս այս ատելութեան արդիւնքներն զգաց իր վրայ. եւ մեզի՝ իր ծառաներուն՝ ազգարարից քանի՛ քանի անդամներ թէ մենք ալ ատոր փորձը պիտի կրենք։ Անգամ մը ըսաւ թէ «Աշխարհ զիս կ'ատէ, որովհետեւ ընդդէմ աշխարհի կը վկայեմ թէ իր գործերը չարիք յառաջ կը բերեն։ Եթէ դուք այս աշխարհէն ըլլայիք, աշխարհ պիտի սիրէր զձեզ. բայց ես ձեզ ընտրեցի աշխարհէն դուրս, եւ ատոր համար կ'ատէ ձեզ։ Ժամանակ պիտի ըլլայ որ ձեզ սպաննողը պիտի նկատէ թէ Աստուծոյ կր ծառայէ»։ Բայց մենք, Քրիստոսի օրինակովը զօրացած, իրեն նման՝ մենք ալ չենք վախնար անոնցմէ որ մարմինը կը սպաննեն, որովհետեւ ատկէ աւելի բան մը չեն կրնար ընել։ Ծշմարտութեան ճառագայթները մեզի համար ցորեկուան լոյսն են, մենք լոյսի մէջ կ'ապրինք, եւ մեր կեանքը չի վախնար մահէն։

«Մարդ չի կրնար խղճափիլ մարմնոյ եւ մահուան տառապանքներէն։ Ժամանակ պիտի գայ որ մեզ կոտորողները պիտի տառապին իրենք ալ եւ պիտի մեռնին. եւ սոսկալի է մտածել թէ այս թշուառ արարածները սաստկապէս պիտի չարչարուին՝ տեսնելով մօտեցալը մահուան որ զիրենք պիտի զրկէ բոլոր այն բաներէն զորս այնքան դժնդակ աշխատանքով մը ձեռք բերած էին ամբողջ իրենց կեանքի միջոցին։ Աստուծոյ շնորհիւ, մենք ղերծ ենք այդպիսի սոսկալի տառապանքներէ, որովհետեւ մեր փնտռած երջանկութիւնը չի կայանար ֆիզիքական չարչարանքներէ եւ մահէ ազատուելուն մէջ, այլ մեր հոգեւոր կեանքի սահպանութեան եւ բարգաւաճման մէջ, մեր հոգիի հաւասարութիւնը պահելու մէջ՝ կեանքի բոլոր իրադարձութիւններուն մէջտեղ, այն սփոփարար համոզումին մէջ թէ բոլոր ինչ որ կը պատահի մեզի մեր կամքէն անկախ պատճառներով, վերջի վերջոյ ազէկ արդիւնք պիտի ունենայ մեզի համար, եւ վերջապէս՝ ու մահաւանդ՝ այն համոզումին մէջ թէ մենք մեր խղճին ու բանականութեան պահանջումներուն համաձայն կ'ապրինք։ Հետեւապէս մենք բնաւ չենք տառապիր՝ ուրիշներու զմեզ ատելուն եւ հալածելուն համար։ Ոչ թէ մենք, այլ անոնք են որ հակակրօթեան եւ ատելութեան խայթոցները կը կրեն, օձի մը պէս զոր կը սնուցանեն իրենց ծոցին մէջ։ Անոնք դատապարտուած են, որովհետեւ լոյսը աշխարհ եկաւ եւ մէջտեղ հանեց իրենց չար գործերը։ Այս ամէնուն մէջ մեզ վրդովող բան չկայ. որովհետեւ ճշմարտութիւնն իր ճամբան պիտի ընթանայ, իր գործը գլուխ պիտի հանէ։ Ոչխարներն հովիւին կը հետեւին, որովհետեւ կը ճանչնան անոր ձայնը։ Քրիստոսի հօտը չպիտի կորսուի. պիտի բարգաւաճի ան, նոր ոչխարներ միանալով անոր՝ աշխարհի ամէն կողմերէն։ «Հովը կը փչէ ինչպէս որ կ'ուզէ, կ'իմանաք անոր ձայնը, բայց չէք կրնար ըսել թէ ո՛ւրկէ կուգայ եւ ուր կ'երթայ»։

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)



## ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Ազգ. ժողովը անցեալ ուրբաթ օր թէև կրցաւ մեծամասնութիւն ունենալ, բայց չկրցաւ լուծել օրակարգի առաջին խնդիրը, որ էր ընտրութիւն կաթող. պատգամաւորին:

Աստեղական գործողութիւններու կարգին շեշտուեցաւ 1888էն ի վեր իրարու յաջորդող Վարչութեանց համարատուութիւնները կազմել տալու պէտքը, նաեւ Կ. Պոլսոյ Պատրիարքին ընտրութեան անհրաժեշտութիւնը: Յետոյ ժողովը անցաւ կաթող. պատգամաւորի ընտրութեան խնդրոյն: Արիստ. էֆ. Գասպարեան, հիմնուելով Ազգ. ժողովին Յուլիս Տի Նիստին որոշման վրայ, գրաւորապէս եւ բերանացի առաջարկեց որոշ ընտրելիներու համար քուէարկելու իրաւունքով պատգամաւոր ընտրել, եւ նոյնիսկ երկու ընտրելի առաջարկեց՝ այժմու տեղակալ Տ. Գէորգ Արքեպ. Սուրենեանց եւ Նիկոմիդիոյ առաջնորդ Տ. Ստեփաննոս Արքեպ. Յովակիմեան: Այս առաջարկին ընդդիմախօսեցին Տ. Թէրզեան էֆ., Վահան էֆ. Թէքէեան, Հմայեակ էֆ. Արամիսնց, Տ. Հմայեակ Արքեպ. Դիմաքսեան, Գաբրիէլ էֆ. Նորատունկեան, Հմայեակ էֆ. Խոսրովեան, որոնք շեշտեցին այժմ ընդհանուր համարումի առարկայ եկեղեցականներ չգտնուիլը, Պոլսոյ պատգամաւորին կաշկանդուած չլլալու, եւ տեղւոյն վրայ կարծիքներու փոխանակութեամբ ընդհ. համաձայնութիւն գոյացնելու պէտքը, Թրքահայոց՝ Ռուսահայոց վրայ եւ փոխադարձաբար տեղեկութիւն հոգնելու, ընտրելիներու վրայ երկու կողմերուն ալ համերաշխութիւն գոյացնելու անհրաժեշտութիւնը, Թրքահայ պատգամաւորներու իրենց տրուած իրաւունքին վրայ հիմնուած՝ Ռուսահայոց ձայնը խնդրելու ամենամեծ անիրաւութիւնը, եւն: Բանախօսները առաջարկեցին թեկադրիւ միայն պատգամաւորին որ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան

ընտրուողը չլլայ ո եւ է կերպով արատաւորուած մէկը, եւ ոչ միայն դատապարտուած չլլայ, այլեւ ամբաստանութեան տեղատ ըլլայ. ըլլայ նաեւ զարգացած, յառաջդիմասէր եւ ժողովրդապետական սկզբունքներու պաշտպան, իր նախորդ պաշտօններուն մէջ իր շուրջ յառաջ եկած չլլան կուսակցական բուռն կիրքեր, դոհացում տուած ըլլայ ժողովրդեան, եւ փաստակար եղած չլլայ, եւ վերջապէս վարչական մարդ ըլլայ:

Իսկ Ստեփան էֆ. Թէլլիեան, Գր. Վ. Պալաքեան, Մելքոն էֆ. Կիւրճեան, Միհրդատ էֆ. Հայկազն, Արիստակէս էֆ. Գասպարեան, Յր. էֆ. Շահրիկեան պնդեցին նախապէս քանակաւ որոշելու պէտքին վրայ, Կիւրճեան էֆ. շեշտեց թէ ժողովին արժանապատուութեան գէժ է ընտրելին մասին չարտայայտուիլ, երբ ամբողջ գաւառը Ազգ. ժողովին որոշման կը սպասէ: Շահրիկեան էֆ. յիշելով Յուլիս Տի որոշումը, պնդեց թէ այս ժողովին էութեան եւ գոյութեան հսկառակ է առանց որոշ ընտրելիներ սահմանելու պատգամաւորի ընտրութիւն կատարել « Հիմա մաշաւանդ որ մէկը չկայ ժողովրդական, պէտք է ճշդել ընտրելին Կաթողիկոսին ընտրութիւնը որպէս զի ժողովրդական ըլլայ, պէտք է ուղղակի արտայայտութիւն ըլլայ ժողովուրդէն բղխած մարմիններուն, որպէս եւ այս ժողովը եւ Գաւառ. ժողովները Հակառակ պարագային ժողովրդական ընտրութիւն չլլար, այլ իբր պատգամաւոր էջմիածին հաւաքուած քանի մը անձերու ընտրութիւնը»: Շահրիկեան էֆ. համամիտ գտնուեցան Եր. Պէյաղճեան, Օրնիկ Տէրունեան էֆէնտինին եւս: Հուսկ ուրիմն Աստեղականը՝ Հրանտ էֆ. Ասատուր՝ յայտարարեց թէ քանի որ Յուլիս Տի որոշումէն ի վեր երեք ամիսը լրացած չէ, ինք չի կրնար պատգամաւորն ազատ ձգելու ո եւ է առաջարկ քուէի դնել. այլ՝ օրակարգին համաձայն՝ միայն կրնայ թոյլատրել որ կատարուի պատգամաւորի ընտրութիւնը, յաջորդ նիստին թողով ընտրելիներն որոշելու խնդրոյն վիճաբանութիւնն եւ ո



որոշումը : Շահրիկեան եւ Ալպոյաճեան էֆենդիները դիտել տուին որ օրէնքի հակառակ է առանց պատգամաւորի պաշտօնն որոշելու ընտրութիւն կատարել : Հետեւաբար որոշուեցաւ այդ ընտրութիւնն ալ յետաձգել յաջորդ նիստին, որ ասին պիտի որոշուի պատգամաւորին հանգամանքն եւ պաշտօնը :

Կարող ընտրութիւնն եւ Եւրոպայի եւ Ամերիկայի Հայ գաղութները.— Ամերիկահայ գաղութը ձեռնարկներ ըրած էր իրաւունք ձեռք բերելու՝ ի մասնակցութիւն կաթող. ընտրութեան : Այդ ուղղութեամբ վերջին երկու հոգեւոյս կաթողիկոսներու՝ Խրիստիանի եւ Իգմիլբեանի օրով փորձեր եղած քայլ մերժուած էին : Շաքիւս ստացուած Ռուսահայ թիրթիւրէ դոնութեամբ կ'իմանանք թէ այս անգամ նոյն նպատակով Տեղակալ Ս.ին կատարած միջնորդութիւնն ընդունուած է, եւ Ռուսիոյ Ներքին գործոց նախարարութեան կողմէ թոյլտուութիւն ստացուած է նոյն երկու թեմերուն եւս ձայն տալու : Հետեւապէս Եւրոպայի իւր Ամերիկայի ազգայիններուն հնարաւորութիւն կը տրուի անսխալեան ընտրութեանց մասնակցելու :

ՎԱՐՁ . ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ , բաղկացած Ս. Տեղապահէն, Արշարունի Տ. Յովհ. Արքեպ. Էն, Քաղաք. Ժողովոյ Առնապետ Արաւանեան Գէորգ էֆ.էն եւ գործակատար Գամէր էֆ.էն, ԴՂ. օր Բ. Դուռ երթալով, ի բացակայութեան Սախափաշայի — որ Նախարարաց Խորհրդոյ կը նախագահէր — Դատական նախարար Խայրի պէյի ներկայացոյց նախ իր շնորհաւորութիւնները, եւ յետոյ ազգին պահանջները՝ Անատոլուի ապահովութեան, հոգային գրամանց լուծման, կառավարական կողմնակալ եւ հակառահմանազրական պաշտօնեաներու եւն. մասին : Տեղապահ Արքազան Հայրը նոր ոճերնեւրու ցանկ մը ներկայացոյց , որոնց հեղինակները չեն պատժուած : Յետոյ Արշարունի Ս. դիտել տուաւ թէ կեդրոնէն գացած հեռագիրները սխալ կը մեկնուին, ինչպէս եղած է Չար-

սանճագի խնդրոյն առթիւ : «Գաւառի մէջ դարերէ ի վեր չստեղծուած ծայրայեղութիւններ կը գործուին, Հայոց սրբավայրերը նախատինքի առարկայ կ'ըլլան, վերաւորելով ամբողջ ազգի մը կրօնական զգացումները : Բաղէշի Ապարանից Ս. Խաչ վանքը, որ թանկազին հնութիւն մ'է եւ ուր բազմաթիւ ձեռագրեր կան, Քուրդերու կողմէ դրամուած է : Նոյնպէս Նփրկերտ գիւղի Ս. Թադէոսի վանքը տեղւոյն գայմագամին՝ Թէլաթի կողմէ փրկուած է, եւ անոր իւր հնութիւն նկատուող մօզայիները եւ Խաչքարերը մշկութի մը շինութեան յատկացուած են» : Յետոյ պատուիրակութիւնն անդրադարձաւ Կիլիկիոյ աղետալի դէպքին միջոցին այրած եկեղեցիներէ եւ վարժարաններու, ընդ որս եւ Հասան Պէյիի եկեղեցիին դեռ վերաշինուած չըլլալուն վրայ : Խօսուեցաւ նաեւ Բանկալթիի գերեզմանատան խնդրոյն վրայ, ուր կ'ուզուի անպատճառ ապօրինի կերպով բաժին մը հանել Հայ-հոմէականներուն, որոնք ո'ր եւ է կերպով իրենց իրաւունքը չեն կրնար պաշտպանել : Խօսուեցաւ նաեւ կրթական եւ զինուորական խնդրոց կարգադրութեան պէտքին վրայ : Խայրի պէյ խոստացաւ Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչներուն բոլոր պահանջները հազարդել Վարչապետին, գաւառներէն սահմանաժեշտ տեղեկութիւններ պահանջել, եւ իր ձեռքով կարգադրել Բանկալթիի գերեզմանատան խնդիրը :

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՐ ԴՂ. օր, Կ. Պոլսոյ Պատր. ընտրութեան նախապատրաստութեան ձեռնարկել որոշելով, իր Ս. Նախագահին եւ Կրօն. Ժողովոյ յանձնեց Համագումար Ժողովը նիստի հրաւիրել ընտրելիաց ցուցակի պատրաստութեան համար, որ պիտի ներկայացուի Քաղաք. Ժողովոյ, կանոնական հնդանուն ցանկը պատրաստուելու, եւ Ազգ. Ժողովոյ ներկայացուելու համար :

Ժողովը Երուսաղէմի վանքին կանոնադրութեան քննութիւնը յանձնեց Մանկունի, Յովհաննիսեան եւ Արշարունի Արքեպ.ներէն կազմուած մասնախումբի մէջ :



ԿՐՕՆ. ԺՈՂՈՒՐ Երոշկաց յառաջիկայ  
ԵՂ. (20 Հոկտ.) նիստի հրաւիրել Համա-  
գումարը, Պատր. ընտրելուց ցանկի պատ-  
րաստութեան համար:

ԴԱՀԼԻՃԻՆ ՅԱՅՏԱԳՐԻՆ մէջ զոր վար-  
չապետ Սաիտ փաշա կարգաց անցեալ  
շաբթու Օսմ. Խորհրդարանին մէջ, գոհու-  
թեամբ տեսնուեցաւ թէ կը խոստացուի  
յարգել զանազան հասարակութեանց կրօն.  
առանձնաշնորհումներն ապահովող փեր-  
մաններուն տրամադրութիւնները: Հա-  
կառակ որ այդ փրաւունքներն արդէն ա-  
պահովուած են Օսմ. Սահմանադրութեամբ,  
վերջերս զանոնք ջնջելու տրամադրու-  
թիւնները կը չեղաուէին երկրին մէջ: Գո-  
հացուցիչ է որ նոր Դահլիճը անգամ մ'եւս  
կը չեղտէ անոնց պահպանման պէտքը:

ԱՏԱՆԱՅԻ ՄԷՋ ԽՈՒՎՈՒԹԻՒՆ Ժազած  
եւ նոյն իսկ ոճիրներ գործուած ըլլալու  
լուրերը կային անցեալ շաբթու. քարերախ-  
տարար այդ լուրերը չստուգուեցան: Ազգ.  
Պատրիարքարանը շաբթուան վերջը հեռա-  
գրեր ստացաւ Ատանայի եւ Մերսինի Ա-  
ռաջն. փոխանորդներէն թէ նոյն տեղերու  
«կացութիւնը լաւ եւ գոհացուցիչ է»:  
Այդ հեռագրերէն ետքը, Շք. օր ուրիշ  
հեռագիր մը հասած ըլլալով Պատրիար-  
քարան, հեռագրով աւելի որոշ տեղեկու-  
թիւն ուղարկեցաւ, եւ Մերսինի Առաջն.  
փոխանորդը Հոկտ. 8 թուով կրկին հեռա-  
գրեց.— «Մերսինի կացութեան մասին ձեր  
նախնական պատասխանեցիկն, կը կարծեմ  
որ մեր հեռագիրը խեղաթիւրուած է»:  
Պատրիարքարանը կրկին հեռագրաց ման-  
րամանոթիւններ պահանջելով:

Շաբթուս ստացուած նամակներ կը  
հերքեն տարածուած լուրերը, որ օտար  
ազգիւրէ առնուած տեղեկութեանց վրայ  
հիմնուած են, Խալապիւրներուն դէմ եղած  
ատելութեան զրոյցներէն ծագում առած:

ՏՐԱՊԶՈՆԻ մէջ թուրք թիթեղագործ  
մը կը հրապուրէ 12-13 տարեկան Հայ  
աղջիկ մը եւ իր տունը տանելով կը բռ-  
նաբարէ զայն: Մէկ քանի օր ետքը այդ  
աղջկան կողմէ թէ եւ խնդրագիր կը ար-  
ուի թէ իր յօծար կամբով իսլամանալ  
կ'ուզէ. բայց տարիքը Առաջնորդարանի եւ  
նուֆուսի արձանագրութիւնները 12-13  
ցոյց տալով, հակառակ Միւֆթիին պնդում-  
ներէն թէ 15-16 տարեկան է, տեղւոյն  
կուսակալ Սիւլէյման Նազըմ պէյ կ'ըսէ  
թէ 16 տարեկանէն վար եղողին իսլամա-  
ցումը չընդունիր, որով աղջիկը կը յանձ-  
նուի ծնողքին:

ԿԻԼԻԿԻՈՅ Ս. Կաթողիկոսին քարտու-  
ղար Տ. Դիւտ Վ. կը հեռագրէ թէ Միւսոն-

օրհնութեան հանդէսը, որ տեղի պիտի ու-  
նենար Գիւտ-Յաջի օրը, յետաձգուած է  
ներկայ ցաւալի վիճակին հետեւանօք: Այս  
տողերը կ'ակնարկեն անշուշտ երկրին պա-  
տերազմական վիճակը:

ՕՐՄԱՆԵԱՆ Ս. Ի խնդրոյն քննութեան  
սկսաւ Գշ. օր Ատենապետաց Դիւանը, եւ  
որոշեց Վրամեան էֆ. Ի ամսաստանութեան  
նախաքննութիւնն ալ կատարելէ ետքը,  
ընդհանուր խնդրոյն համար իր կարծիքը  
ներկայացնել: Ուստի յառաջիկայ նիստին  
պիտի հրաւիրէ Վրամեան էֆ. Ի, մէկ քա-  
նի կէտերու մասին լուսարանութիւն ստա-  
նալու համար:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ Վանայ վար-  
ժապետանոցին համար՝ պէտք եղած գոր-  
ծիքներու անհրաժեշտ գումարը նուիրած  
ըլլալով, Վարժապետանոցը պիտի բացուի  
ի մօտոյ: Ուսուցիչները պատրաստ են ար-  
դէն, եւ Տնօրէն Գույումճեան էֆ. հասած  
է Վան:

ՄՈՒՇԻ Առաջնորդ Տ. Ներսէս Եպիս-  
կոպոս Խարախանեան որ ժամանակէ մը ի  
վեր պաշտօնէ քաշուած էր, ետ առեր է  
իր հրամարականք: Ն. Սրբազնութիւնն իր  
կողմէ Կաթող. ընտրութեան պատուիրակ  
նշանակած է Տ. Բագարաւ Վ. Վարդա-  
պարեանը:

ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆԻ Էքպէզ գիւղէն կը  
գրեն Բիւզանդիոնի թէ Լատին հոգեւո-  
րականներ Ատանայի գէպէն ի վեր կը  
չարունակէն առաւել քան երբէք եռան-  
դուն գործունէութեամբ մը իրենց հաւա-  
տորական ձեռնարկները: Վերջերս նոյն  
գիւղին մէջ Հայ մը հիւանդանալով, Լա-  
տին հոգեւորականներ քացեր խոստովան-  
ցուցին եւ հաղորդէր են նոյն հիւանդը:  
Աւասիկ նոր եւ ցաւալի ապացոյց մը կի-  
րիկեան գիւղերու հոգեւորապէս լքուած  
վիճակին, որուն դէմ պայքարելու համար  
ազնիւ — բայց կը վախնանք թէ անգոր-  
— ճիքեր կ'ընէ այն կողմերու հոգեւորա-  
կանութիւնը: Հայ ժողովուրդը ժամանակ  
է որ ուշադրութիւն զարձնէ այս իրողու-  
թեան:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ԲԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ  
ՀԱՐՄԱՅՐ ԲԶՆՅ. ԿԵՋԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ



# ՕՍՄ. ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

شركة تجارية عثمانية

## SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ Կ. ՊՈԼԻՍ

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԴՐԱՄԱՏՆԵԱԿՆԵՐԸ ԱՌժԱՄԵԱՅ ԿԵՐՊՈՎ, ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՆՆ

ՄԹԱՆՊՈՒՎ, ԴԱԹԵՐԱՏԵՐՈՂԱՎ ԿՍՆ

Հայկական սոյն զրամական հաստատութիւնը կ'ընէ փոխառութիւններ՝ առեւտրական տոմսերու, մուրհանքերու, փոխանակագիրներու, բաժնեկիցիներու, պարտաւորութիւններու, սպաւանքներու եւ բնաւաւորներու վրայ:

Կուտայ չէքեր, վարկագիրներ, փոխանակագիրներ եւ հետագրական վճարումի հրամաններ՝ ինչպէս Թուրքիոյ նոյնպէս աշխարհիս բոլոր մասերուն վրայ:

Կը դնէ եւ կը ծախէ ամեն տեսակ բաժնեկիցիներ, եւ պարտաւորութիւններ, թէ՛ մեր եւ թէ՛ բոլոր օտար հրապարակներուն վրայ, ինչպէս եւ օտար զրամներ:

Կը գանձէ եւ կը զեղչէ առեւտրական տոմսեր, մուրհանքեր, փոխանակագիրներ, բաժնեկիցիներ եւ կտրօններ:

Կ'ընդունի զրամական աւանդներ նպատաւոր սրայմաններով:

## ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մեր համայնքին մեջ քաջաշէնքու համար կ'ընդունի  
ֆանըրիկ (25) դրուշէն սխեդով գումարներ:

Դրամատունս կը կատարէ նաեւ, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ եւ թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններու եւ սպաւանքներու գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում եւ արտածում:

Կ'ընդունի ներկայացուցչութիւն թէ՛ տեղական եւ թէ՛ օտար տուններու:

Կը կազմէ առեւտրական եւ ճարտարարուեստական ընկերութիւններ եւ կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրագումար չինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:



## ՄՏԱՑՈՒՄԸ ԳԻՐՔԵՐ

ԱՐԴԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ . —

Գրեց Տիկին Արշակունի Թեոդիկ:— Պրան- սացի հոյակապ հեղինակին՝ Ժիւլ Բայօի բարոյագիտական վերջին գործին հետեւ- ղութեամբ եւ ուսմանց՝ ամենանոր գրու- թիւներու ընդգրկումով պատրաստուած ընտիր գոսագիրք մը, որ խնամոտ հոգա- ծութեամբ պատշաճեցուած է հայ կեան- քին՝ իւրաքանչիւր ստորաբաժանումէ կտրը աւելցուելով ընտիր պատմութեանքներ, գե- ղեցիկ մտածումներ եւ ընթերցումներ, բարոյագիտական դասերը աւելի՝ ուժգին տպուորելու համար աղուն մտքին սե- րտին մէջ: Ձերմապէս կը յանձնարարուի Ա. Վ. Վարժարաններու վարիչներուն: Հրատարակութիւն Յովն. Դըլլանտեան գրա- տան: Գին 8 դրշ:

ԴԱՍԸՆԹԱՅՔ ՉԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺԸՇ- ՏՈՒԹԵԱՆ. — Դիւրուսոյց մեթոտով, պատ- րաստեց ծանօթ ջութակահար Անտոն Կեֆ. Մըսրիլեան: Կը բովանդակէ եւր. ձայնա- գրութեան հիմնական կանոնները, դիւրմ- քունելի բացատրութիւններով եւ գործ- նական հրահանգներով: Ատոնց վրայ աւել- ցուած է Բ. մաս մը՝ հայկական նոր եր- գերու, միաձայն, երկձայն եւ եռաձայն դաշնաւորուած՝ դաշնակի կամ օղկի ընկե-

րակցութեամբ: Հրատարակութիւն Վ. եւ Պ. Չարդարեան եղբ. գրատան: Գին 5 դրշ:

3—2

ԻՆՆՍՈՒՆ ՎԵՅ. — Գրեց Սմբատ Բիւ- րաս. — Հրատարակուեցան Դ. Ե. Չ. վեր- ջին հատորները: Ազգային ժողովրդական սիրուած վիպագրին այս յուզումնալից վէպին, ուր կենդանի գոյներով կը պատ- կերացնին իննսուն վեց թուականին բո- լոր արիւնոտ դրուագները, պանքայի զէպ- քէն առաջ եւ անկէ ետքը, այնքան վառ, կենդանի եւ սրաւթունդ գրչով մը պատ- կերացուած: Գին Դ. հատորին 6 դրշ. Ե. եւ Չ. հատորներուն ծական զրշ: Վեց հատորը՝ 40 դրշ:

ԸՆԴԱՐՉՍԿ ԴԲԱՅՈՒՅԱԿ ԳԻՐՔԱԾԱՌ — Կրատարակիչ Ա. Եսզընեան գրատան. — Եսզընեան գրատան սեփական հրատարա- կութեանց հեղինակներու պատկերներով: Բովանդակութիւն. — Դասագիրք, Հայկա- կանք, զրական, դիտական, վիպական, գեղարուեստական, հողագործական, ար- հեստական, աշխարհայոյցներ, ժողովրդա- կան Դրական ապագանքներ ընդհեր- պիտի օգտուին եթէ աչքի առջեւ ունե- նան այս գրացուցակը ուր կը պարզուին շատ նպաստաւոր պայմաններ Հասցէ՝ Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Պաղքըլար, Թիւ 11:

## ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՆԵԱՆ

Սուրբան-Համամ Մօշա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ